Հավելված N 1
Պրոբացիայի ծառայության պետի
2025 թվականի հուլիսի 10-ի
N 231-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կենտրոնական մարմնի էլեկտրոնային մոնիթորինգի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, Ծառայության և սույն կանոնադրության հիման վրա:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Բաժնի նպատակն է այլընտրանքային խափանման միջոցների կիրառման պայմաններում էլեկտրոնային հսկողության սարքերի միջոցով և հատուկ էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ իրականացնել պրոբացիայի շահառուի նկատմամբ շուրջօրյա էլեկտրոնային հսկողություն՝ համաձայն իրավասու մարմնի կողմից սահմանած պայմանների և սահմանափակումների:

4. Բաժնի խնդիրներն են՝

1) էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ կազմակերպել պրոբացիայի շահառուի գտնվելու վայրի և տեղաշարժի վերահսկման աշխատանքները.

2) աջակցել Ծառայության տարածքային մարմինների կողմից այլընտրանքային խափանման միջոցների կիրառման և հսկողության աշխատանքներին՝ շահառուի նկատմամբ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման պայմանների և սահմանված սահմանափակումների պահպանման ուղղությամբ.

3) ապահովել էլեկտրոնային համակարգերի ու կիրառված էլեկտրոնային հսկողության սարքերի շուրջօրյա աշխատանքը՝ մշտադիտարկման միջոցով վերահսկելով պրոբացիայի շահառուների կողմից պարտավորությունների պատշաճ կատարման ընթացքը.

4) ուսումնասիրել պրոբացիայի ոլորտում էլեկտրոնային մոնիթորինգին և տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող միջազգային փորձը և միջազգային գործընկերների հետ պարբերաբար իրականացնել փորձի փոխանակում.

5) կազմակերպել էլեկտրոնային վերահսկման տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության աշխատանքները և սահմանված կարգով ներկայացնել դրանք Ծառայության համապատասխան ստորաբաժանմանը ու պաշտոնատար անձանց.

6) Ծառայության տարածքային մարմիններից ստանալ Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունը և նյութերը:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի գործառույթներն են՝

1) պրոբացիայի շահառուների նկատմամբ կիրառված էլեկտրոնային հսկողության միջոցներով շուրջօրյա մշտադիտարկումը և շահառուների գտնվելու վայրի ու տեղաշարժի վերաբերյալ տվյալների հավաքագրումը, մշակումը, անհրաժեշտ տվյալների և արձանագրված խախտումների հիման վրա շահառուի վարքագծի վերլուծությունը.

2) օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով տարածքային մարմիններին էլեկտրոնային հսկողության սարքերի հանձնման-ընդունման, սարքերի պահպանման, կարգաբերման, ինչպես նաև սարքերի արդյունավետ կիրառման համար համապատասխան աշխատանքների իրականացումը.

3) պրոբացիայի շահառուների կողմից խախտումներ թույլ տալու դեպքում անհապաղ արձագանքման, խախտման փաստի արձանագրման ու Ծառայության

համապատասխան ստորաբաժանմանը տեղեկատվություն տալու աշխատանքների իրականացումը.

4) ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև ընթացիկ ու հեռանկարային ծրագրերի, ոլորտին վերաբերող ստանդարտների, իրավական և նորմատիվ տեխնիկական ակտերի նախագծերի վերաբերյալ Ծառայության պետին առաջարկությունների ներկայացումը.

5) շահառուի նկատմամբ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման պայմանների և սահմանված սահմանափակումների պահպանման ուղղությամբ հսկողության շրջանակներում Ծառայության տարածքային մարմիններին աջակցությունը.

6) էլեկտրոնային հսկողության համակարգի ու սարքավորումների անխափան աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցների ու միջոցառումների իրականացման, ինչպես նաև տվյալների փոխանակման համակարգերի պաշտպանվածության, վերլուծական ու ռիսկերի կանխատեսման գործիքների ներդրման, գործընթացների ավտոմատացման ու շարունակական կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

7) Բաժնի լիազորությունների շրջանակում տարբեր առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի, արձանագրությունների ու այլ գրությունների նախապատրաստումը և կազմումը.

8) Ծառայության էլեկտրոնային հսկողության համակարգի և միջոցների առկա ու նոր ներդրված տեխնոլոգիաների կիրառման հարցում ինչպես Բաժնի, այնպես էլ Ծառայության համապատասխան աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման աշխատանքների կազմակերպումը ու դրան օժանդակումը.

9) Բաժնի առջև դրված խնդիրներից ու գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծերի, եզրակացությունների և այլ փաստաթղթերի վերաբերյալ Ծառայության այլ ստորաբաժանումներին դիրքորոշումների, մեթոդական օժանդակության տրամադրման և էլեկտրոնային հսկողության համակարգի ու սարքավորումների կիրառման ուղեցույցների մշակման աշխատանքների իրականացումը.

10) Ծառայության պետի կողմից տրված և Բաժնի գործունեությունից բխող այլ հանձնարարականների ու ցուցումների կատարումը.

11) Բաժնի գործունեությունից բխող օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

4. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Բաժնի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ծառայության պետը:

7. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը:

8. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Ծառայության պետին:

9. Բաժնի կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Բաժնի պետը, եթե օրենքով և այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Բաժնի կառուցվածքում ընդգրկված չեն ներքին կառուցվածքային միավորներ: